

ՀՀ րդարադատության նախարարության նախարար պարոն Ռուստամ Բադասյանին

Քաղաքացի՝ Հարություն Սարոյի Գալենցի կողմից

Էլ. հասցե: archigalentz@gmail.com

Կայքէջ՝ www.galentz-research.org ; www.InteriorDasein.de ; www.wolf-galentz.de

Հեռ.: + 49 179 547 5312 (Բեռլին, Գերմանիա); + 374 9 (0)99 919 818 (Երևան)

Հարգելի պարոն Բադասյան,

Շնորհակալ եմ Ձեր 10.01.2020թ. (համար 28.2/211-2020) մանրակրկիտ պատասխանի համար: Ըստ սահմանադրության օրենքի՝ դատավորներին անպայման հարգանքով վերաբերվելու Ձեր պնդումն անշուշտ ընդունում եմ, բայց համաձայն չեմ Ձեր այն նկատողության հետ, որ իմ կողմից բավական փաստեր չեին ներկայացվել կոնկրետ դատավորի անընդունելի գործելակերպի մասին (դատական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումի և դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտումների փաստերը):

Դիմումիս նպատակը ո՛չ թե դատավորների դեմ բողոքելն էր, այլ՝ հանրապետության առողջ ուժերի ներկայացուցիչ՝ երիտասարդ նախարարի հետ հանդիպելը:

Կալենց գերդաստանի մշակութային ժառանգության կարգավորման հետ կապված խայտառակ պատմությունը դեռ մնում է հասարակության ուշադրության կենտրոնում: Իմ դիմումին կից՝ ես ներկայացրել եմ մի շարք հոդվածներ, որոնք այս խնդիրը լուսաբանել են մամուլում: Երևի Դուք դրանց ուշադրություն չեք դարձրել և չեք նկատել, որ արդարադատության համակարգի որոշ մարմիններ ակնհայտորեն հանցագործությունը կոծկում են, եթե չասենք՝ դավադրության մաս են կազմում: Հիշեցնեմ, որ այդ համակարգը ոչ միայն դատավորներն են կազմում, այլ նաև ոստիկանները, քննիչները, նոտարները և դատախազները:

Հաճելի է անշուշտ, որ Ձեր պատասխանի մեջ Դուք մանրամասն նշում եք Դատալեքսում գրանցված (դատական) գործերի ցուցակը, բայց այդ բոլոր և՛ ընթացիք, և՛ կարճված գործերն իմ

www.galentz-research.org կայքում գետեղված են, և նախարարության հետ իմ այս նամակագրությունը հասարակությանը նույնպես մատչելի կլինի՝ դառնալով արվեստաբանների ուսումնասիրության առարկա:

Ցավալի է, որ երրորդ անգամ դիմելով Արդարադատության նախարարություն՝ սկզբում՝ նախկին փոխնախարար Արթուր Հովհաննիսյանին, հետո՝ նախարար Զայնալյանին, հիմա էլ՝ պարոն Բադասյանին, կոնկրետ նամակներով շարունակում եմ ստանալ պարզապես հարցի հետ բոլորովին կապ չունեցող և բուն խնդրից շեղող խուսափողական, ձևական պատասխաններ: Կարծես թե՝ մեկուկես տարի հեղափոխությունից հետո արդարադատության համակարգում ոչինչ չի փոխվել: Այժմ՝ սպասելով իսկական որակական փոփոխությունների, այնուամենայնիվ ստիպված եմ դիմել արտասահմանյան համապատասխան կազմակերպությունների, որպեսզի նրանք պաշտպանեն իմ քաղաքական իրավունքները և պարզապես մարդկային առողջ տրամաբանությունը:

Ձեր նախարարությանը ցանկանալով բարեփոխումներ՝ հեղափոխության հեռահար նպատակների՝ թափանցիկության և ժողովրդավարության ամրապնդման գործում, և ջերմ բարեմաղթանքներով,

Արվեստագետ և համադրող՝

Հարություն Արշի Գալենց

30.01.2020թ

